



ՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ ՇՓՈԹ. ԿՈՄԻՏԱՍԻ ՔՈՒՐԴ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԹԵՂԸ

ՄԱՐԻՆԷ ՄՈՒՇԵՂԵԱՆ
marinamoushegian@gmail.com

Կոմիտասը հայ երաժշտության պատմության մեջ այն միակ ստեղծագործողն է, որի մասին ամենից շատ են գրել ու խօսել: Նրա երկերն ամենից շատ են հրապարակել, կատարել, իսկ ստեղծագործական ուղին բազմաթիւ անգամ վերլուծել: Կոմիտասի կերպարն առանձին թեմա է հայ կերպարուեստում, եւ գրականության մեջ: Բայց, այնուամենայնիւ, «ինչ՞ու եւ

ինչպէ՛ս» հարցերը կոմիտասականի մշտական ուղեկիցներն են դեռելու: Խօսքն այս անգամ վարդապետի երաժշտագիտական գործունէության մասին է: Յայտնի է, որ Կոմիտասը 1896-1899ին ուսանել է Բեռլինում՝ Ռ. Շմիդտի մասնաւոր երաժշտանոցում, եւ զուգահեռաբար, սովորել ու աւարտել է Ֆրիդրիխ Վիլհելմ (այժմ Հումբոլդտի անուան) Համալսարանի փիլիսոփայության բաժինը: Վարդապետի առաջին կենսագիր՝ բանասէր, բանաստեղծ, հասարակական գործիչ Թորոս Ազատեանն իր *Կոմիտաս Վարդապետ* (Կ. Պոլիս, 1931) գրքում այդ մասին գրում է. «1899 Յուլիսին Կոմիտաս Վրդ. Կաւարտէ երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացը: Աւարտական թէզն էր «Քիւրտ երաժշտութիւնը», որ մեծ հետաքրքրութիւն արթնցուց իբրեւ աննախընթաց գործ»¹:

Բայց ինչու՞: Ինչու՞ «Քիւրտ երաժշտութիւն», երբ վարդապետն իր ողջ կենսական, գիտական, զգացական ուժերը ծառայեցնում էր մէկ նպատակի՝ այն է ազդարարել ի լուր ամենքի, որ «Հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն»: Օտար մշակոյթի մասին «թէզ» գրելու հանգամանքը պարզունակ ենթադրութիւն է, թէ՞ ունի փաստական հիմնաւորում, արդեօ՞ք այդ «թէզն» էր ամփոփումը «երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացքի», եւ, վերջապէս, որտե՞ղ է վարդապետը պաշտպանել իր «թէզը», Շմիդտի մասնաւոր երաժշտանոցում, թէ՞ Ֆրիդրիխ Վիլհելմ Համալսարանում, ո՞րն է Ազատեանի աղբիւրը: Աղբիւրը նշուած չէ: Յաջորդ կենսագիրների մի զգալի մասը կրկնել է Կոմիտասի «աւարտական թէզի» մասին այս տեղեկութիւնը, մի դէպքում առանց աղբիւրը նշելու², միւս դէպքում՝ որպէս ծանօթագրութիւն նշելով, թէ այն չի պահպանուել³: Եւ այսպէս տարիներ

շարունակ պնդել են թեզի գոյութեան մասին, երբ չկայ այն հաստատող որեւէ փաստ: Իր մէջ անորոշութեան տարրեր պարունակող այս մէկ արտայայտութիւնը՝ «1899 Յուլիսին Կոմիտաս Վրդ. կ'աւարտէ երաժշտանոցի տեսական ու գործնական ամբողջ դասընթացը: Աւարտական թէզն էր «Քիւրտ երաժշտութիւնը», որ մեծ հետաքրքրութիւն արթնցուց իբրեւ աննախընթաց գործ», բաւարար կենսունակութիւն է դրսեւորել հասնելու համար մինչեւ մեր օրերն ու դառնալ իր շուրջը հիւսուող անհիմն պատմութիւն:

Վերջերս, 2012ին տպագրուած մի գիրք՝ Ուսուր Բէկ, Ուրուագիծ Եզդի ժողովրդի, Ազգապետերի Մի Տոհմի, Հայ-Եզդիական Կապերի Պատմութիւն՝ գրքում, Կոմիտասի կենսագրական դրուագների բազմաթիւ այլ աղաւաղումների շարքում էական տեղ է տրուած նաեւ «Քիւրտ երաժշտութեանը»: Օրինակ՝ հեղինակը գրում է. «1899 թ. օգոստոսի 20-ին Կոմիտասը պաշտպանում է իր դիպլոմային աշխատանքը «Քրդական երաժշտութիւն» թեմայով»⁵: Որտեղի՞ց յայտնուեց այս ամսաթիւը: Կենսագիրներից որեւէ մէկը եւ ոչ էլ վարդապետն ինքը կրթութիւնն աւարտելու ճշգրիտ ժամկէտ չի նշել իր նամակներում, կամ ինքնակենսագրութեան մեջ: Յաջորդ էջին, կրկին խօսելով դիպլոմայինի մասին հեղինակը շարադրել է. «1899-ին Կոմիտասը պաշտպանեց քրդական երաժշտութեանը նուիրուած իր դիպլոմային աշխատանքը եւ աւարտեց Բեռլինի Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանի երաժշտա-փիլիսոփայութեան պատմութեան բաժինը, միաժամանակ ստացաւ Ռիխարդ Շմիդտի մասնաւոր կոնսերվատորիայի աւարտական վկայականը»⁶: Անմիջապէս հարց է ծնում՝ եթէ համալսարանում Կոմիտասը դիպլոմային է պաշտպանել, ապա ստացե՞լ է համապատասխան վկայական կամ թեզին վերաբերող վկայագիր: Ինչպէ՞ս կարելի է թեզ պաշտպանել մի հաստատութիւնում եւ «միաժամանակ» մէկ այլ հաստատութիւնից վկայական ստանալ:

Բոլորը կը համաձայնեն, որ առաջ եկած հարցերի պատասխանները գտնելու ամենահաւաստի աղբիւրը հենց Կոմիտաս վարդապետի թողած գրաւոր ժառանգութիւնն է: Ուրեմն հարկաւոր է դիմել այդ աղբիւրին եւ պարզել մեծ մտաւորականի հետաքրքրութիւնների շրջանակը 1890-99ին: Արդեօ՞ք Կոմիտասի ուսումնասիրութիւնների ցանկում կայ քրդական ժողովրդական երաժշտութեանը նուիրուած որեւէ պատահիկ: Ժամանակագրական կարգով ներկայացնեմ նրա հրապարակումների ցանկը: *Ազգային Օրհներգ* (1891), *Հայոց Եկեղեցական Եղանակները* (Վաղարշապատ, 1894), «Շար Ակնայ երգերի» (*Արարապ*, Վաղարշապատ, 1895), «Տասն Եւ Վեց Ձայն Երգեցողութիւն Պատարագի» (Վաղարշապատ, 1897), «Հայոց Եկեղեցական Երաժշտութիւնը ԺԹ. Դարում» (*Արարապ* Վաղարշապատ, 1897), «Երգեցողութիւնք Ս. Պատարագի» (*Արարապ*, Վաղարշապատ, 1898), «*Die Armenische*

Kirchenmusik» (Հայ եկեղեցական երաժշտություն), *Արարապ, Վաղարշապատ*, 1899), *Sammelbände der Internationalen Musik-Gesellschaft*, Leipzig: Քրդական թեմայի բացակայությունն ակնյայտ է:

Այժմ անդրադառնանք այն նիւթերին, որոնք 1899ին դեռեւս անտիպ էին: Ահա վարդապետի հայկական նոտագրութեամբ գրուած, ձեռակերտ ժողովածուն՝ «Ձայնագրած Ազգային գիւղական-ժողովրդական երգերի, պարերի Հաւաքածո», հաւաքեց եւ ձայնագրեց Սողոմոն Ա Սարկաւազ Սողոմոնեանց, միաբան Ս. Էջմիածնի, 94, 9/բ, Ս. Էջմիածին»⁷: Այստեղ գետնեղուած են 37 ժողովրդական երգերի նոտային եւ բանասիրական բնագիր, ինչպէս օրինակ «Երկինքն Ամպել Ա», «Գարուն Ա», «Զիմ Գլխի Ֆաթէն Կիտամ», «Ղարսա Բերդը» եւն.: Երգերից միքանիսի խօսքերին կից Կոմիտասը տեղեկութիւն է տալիս երգի տարբերակների մասին: Օրինակ «Սիրել Եմ Սեւն Երեսին» երգի երկու օրինակ է ներկայացուած եւ նշուած է. «Այս երգը 2 տարբերակ ունի. Առաջին տողը Շիրակի եղանակն է, երկրորդը՝ Իգդիրի. չափը բոլորովին համապատասխան, եղանակը այլ. խօսքերի զանազանութիւնը քիչ է, միայն բարբառն է փոխուում. մենք գերադասեցինք Արարապեան բարբառը»: Երկրորդ ձեռագիր ժողովածուն, դարձեալ գրուած հայկական նոտագրութեամբ վերնագրուած է՝ «Հոգետր եղանակներ, Հաւաքեց Սողոմոն Ա Սարկաւազ Սողոմոնեանց, միաբան Ս. Էջմիածնի, 1893, 24/գ, Ս. Էջմիածին»⁸: Այստեղ շարադրուած են Սահակ արեղայ Ամատունու եւ Գէորգ արեղայ Աբրահամեան Ռշտունու երգածից նոտագրուած այնպիսի եղանակներ ինչպէս «Հալիկ Մի Պայծառ», «Հաւուն, Հաւուն», «Տէր Ողորմեա» եւն., որոնք ոչ միայն հայ մոնոդիայի, այլեւ, վստահաբար կարելի է ասել, համաշխարհային երաժշտական մշակոյթի անգնահատելի եւ անանց արժէք են: Մէկ ուրիշ օրինակ՝ կոշտ կազմով նոտային տետր, որի վրայ Կոմիտասի ձեռքով նշուած է. «Մենեղ դաշնակութեամբ. կամ նուագակցութեամբ. Կոմիտաս վարդապետ, 1897-98. Բերլին»⁹: Առաջին էջին գրուածը «Օրինեցէք, Գովեցէք...» հոգետր եղանակը ներդաշնակելու մի փորձ է, յաջորդ էջին՝ «Մի Գեղեցիկ Պարզ Գիշեր էր...» մեղեդին բազմաձայնելու (սոպրանոյի եւ ալտերի համար) օրինակ, երրորդը եւ չորրորդը՝ «Տէր Կեցո...» եւ «Հայր Մեր» եղանակների բազմաձայն մշակման սեւագրութիւններն են: Թուարկուած օրինակների կողքին քրդական թեմայի գոյութիւնը դուրս է տրամաբանութիւնից:

Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Պարմաբանասիրական Հանդէսում¹⁰ երաժշտագէտ Ռոբերտ Աթայեանը տպագրել է մի ընդարձակ յօդուած՝ «Կոմիտասի Ուսումնառութիւնը Բեռլինում» վերնագրով, որտեղ մանրամասն ներկայացրել է վարդապետի կենսագրութեան գերմանական շրջանը: Այսինքն՝ ինչ է ուսումնասիրել Կոմիտասը Շմիդտի երաժշտանոցում եւ համալսարանում, ինչ են պահանջել նրա ուսուցիչներն իրենց ուսանողից եւ ինչ հմտութիւնների է

տիրապետել շնորհալի սանը կրթութիւնն աւարտելիս: Կոմիտասն ստացել է երկու աւարտական վկայական՝ մէկը երաժշտանոցից Շմիդտի ստորագրութեամբ եւ կնիքով, միւսը՝ Ֆրիդրիխ Վիլհելմ Համալսարանի կողմից փիլիսոփայութեան ֆակուլտետի դեկան Վետցելի եւ ռեկտոր Հ. Շուարցի ստորագրութեամբ: Աթայեանը թարգմանաբար ներկայացրել է այս երկու վկայականների բովանդակութիւնը՝ «Պր. Կոմիտաս վարդապետ Գվորգեանը, Էջմիածնի վանքից, 1896 թ. Յուլիսից մինչեւ 1899 թ. Յուլիս եղել է իմ աշակերտը: Բնականից օժտուած լինելով երաժշտական արտակարգ սուր լսողութեամբ եւ վառ երեակայութեամբ, Պր. Կոմիտաս Գէորգեանը ինձ մօտ, անխոնջ ջանասիրութեան շնորհիւ, ինչպէս տեսութեան եւ կոմպոզիցիայի, այնպէս էլ երգեցողութեան մէջ հասաւ աւելի քան գոհացուցիչ արդիւնքների ու դառաւ հիմնովին կրթուած, լուրջ երաժիշտ: Պր. Կոմիտաս Գէորգեանը կատարելապէս տիրապետում է հարմոնիայի ուսմունքին, խիստ եւ ազատ ոճի շարադրութեանը, ձեւերի տեսութեանը եւ գործիքաւորմանը, այնպէս որ, ունենալով նաեւ մանկավարժական շնորհք, միանգամայն ի գօրու է այդ բոլոր բնագաւառներում նաեւ ուսուցչութիւն անելու: Նա նաեւ կարող է լինել երգչախմբի եւ նուագախմբի հմուտ դիրիժոր, ընդ որում, դրանում նրան շատ կ'օգնի իր լաւ մշակուած հաճելի բարիտոն ձայնը»: Ստորագրուած է՝ «Ռիխարդ Շմիդտ, պրոֆեսորական արքայական պրոֆեսոր եւ մուզիկդիրեկտոր: 2 Սեպտեմբերի, 1899, Բեռլին, Պոպսդամշտրասսէ, 104»: Համալսարանական կրթութեան մասին վկայականում գրուած է. «Մենք՝ Բեռլինի Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանի Ռեկտորը եւ Սենատը այս աւարտական վկայականով հաստատում ենք, որ պր. Կոմիտաս Գէորգեանը՝ ծնուած Կուրինայում (Թուրքիա), կօշկակարի զաւակ, հիմնատու երաշխատրութիւններով 1896 թ. Հոկտեմբերի 22-ին ընդունուել է մեզ մօտ եւ մնալով մինչեւ 1899 թ. ամառային կիսամեակի վերջը, փիլիսոփայութեան բնագաւառում երեւան է բերել ջանասիրութիւն: Համաձայն ներկայացուած վկայութիւնների, Համալսարանի ծրագրով նա լսել է հետեւեալ դասախօսութիւնները...»: Այնուհետեւ թուարկում են Գերմանիայի եւ համընդհանուր երաժշտութեան պատմութեան (սկսած XVI դարից) մի շարք դասընթացներ, նաեւ Եկեղեցական երաժշտութեան պատմութեան ներածութիւն, երաժշտագիտութեան ներածութիւն, գերմանական երաժշտութեան պատմութիւն, երաժշտական գործիքների, նոտագրութեան պատմութիւն, երաժշտական գեղագիտութիւն, երաժշտական քննադատութեան պատմութիւն եւ երաժշտագիտական վարժութիւններ նուագարանների թանգարանում: Ինչպէս պարզուեց, Կոմիտասից չի պահանջուել ո՛չ դիպլոմային եւ ո՛չ էլ թէզային աշխատանք: Իսկ նրան տրուած վկայականներում, որոնք պահում են Գրականութեան եւ Արուեստի Թանգարանում (ԳԱԹ), որեւէ ակնարկ չկայ աւարտական թէզի կամ ենթադրուող թէզի բովանդակութեան մասին: Արդեօ՞ք գաղտնի

կը պահէր վարդապետն իր ուսումնասիրութիւնը, եթէ այն գոյութիւն ունենար:

Ահա այսպիսի կրթութիւն ստացած եւ երաժշտական հիմնաւոր գիտելիքներով Կոմիտասը 1899ի աշնանը վերադարձաւ Էջմիածին: Ուսումնառութեան տարիներին վարդապետն աշխուժ նամակագրութիւն էր պահպանում իր ընկերների, բարեկամների հետ: Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանեանին հասցեագրած նրա նամակները: Դրանք աւելի նման են հաշուետուութեան քան տպատրութիւնների: 1899 Յունիսին նա գրել է Կոստանեանին. «Անցեալները մեծ յաջողութեամբ երկու դասախօսութիւն կարդացի Բերլինի երաժշտանոցում. հայոց երաժշտութեան մասին՝ առհասարակ եւ արեւելեանի մասին՝ մասնաւոր տեղեկութիւն միայն. այս կրկին դասախօսութիւնս մեծ զարկ տուաւ երաժշտական շրջանում յայտնի լինելու, նամանաւնդ, երբ անդամ ընտրուեցայ Միջազգային երաժշտական ընկերութեան, ուր միայն յայտնի երաժիշտներն են անդամակցում: Դասախօսութիւնս տպել տալու ստիպեցին համալսարանի ուսուցչապետներս, եւ Ընկերութեան գիտական ժողովածուի հրատարակութեան առաջին համարում, որ լոյս կը տեսնի Օգոստոսի մէջ, հիւրընկալուեցաւ իմ յօդուածս էլ, այնպէս որ այժմ ստիպուած եմ տպագրութեան համար պատրաստել եւ հասցնել»¹¹: Ընկերութեան *Sammelbände der Internationalen Musik-Gesellschaft* հանդէսում 1899ին տպագրուել է Կոմիտասի «Die Armenische Kirchenmusik» (Հայոց եկեղեցական երաժշտութիւն) յօդուածը, որի մասին անթաքոյց հպարտութեամբ գրել էր նամակում: Մամուլը բաւական արագ եւ հանգամանօրէն անդրդարձել է վարդապետի դասախօսութիւններին: Օրինակ՝ Հանդէս Ամսօրեան «Հայկական երաժշտութիւնն Ի Բերլին» յօդուածում մանրամասնօրէն նկարագրել է Կոմիտասի ելոյթը. «Բերլինէն «Նոր-Դարին» (թ.115) կը գրեն թէ արժանապատիւ Կոմիտաս Վարդապետըպրոֆեսորներու, երաժշտագէտ դոկտորներու, անոնց կանանց, հայ եւ գերմանացի ուսանողաց ընտրեալ հասարակութեան մ'առջեւ հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին դասախօսութիւն մը կարդացեր է, երաժշտանոցի (conservatoire) դահլճին մէջ» ըստ խնդրոյ երաժշտական նախագահ Պրոֆ. Ֆլայշէրի: Հայոց եկեղեցուոյն հակիրճ պատմութենէն ետքը՝ արժ. Կոմիտաս Վր. ցոյց տուեր է հայոց եկեղեցական, ժողովրդական եղանակներու կազմութեան տարբերութիւնը: Առ այս վախճան՝ կազմուած էր յառաջագոյն չորս հոգիէ (գերմանացի) բաղկացած խումբ մը, որոնք այս եղանակներն երգեցին. եկեղեցական երգերէն երգուեր են՝ Փառք Քեզ Տէր. Օրհնեցէք, Գովեցէք. Ով Ջարմանալի. Այս Խորհուրդ Լցաւ. Սուրբ Ես Տէր եմ. Իսկ ժողովրդական երգերէն՝ Սոնա Եար. Անձրեւն Եկաւ, Այ Տղայ, Հերոցն Արի, Հով Արէք Սարեր, Հայրիկ, Հայրիկ: Կոմիտաս Վր. երգեր է քրդերէն՝ Լէլէ

Գարե, Հովուի Ոչխարներ, Աղ Կոնգես, են. Արաբերեն՝ Արա էյ Թադրուվի, Ջեմիլքամիլ. են. փաճկերեն՝ Րուզի Շեր, Քիմ Տեմիշ Տիր, Բահարողլու, են.: Այս ամբողջն երգուեր են՝ ցուցնելու համար ասոնց եւ հայկական եղանակաց մէջ տարբերութիւնը: Բաց աստի Կոմիտաս Վր. ցուցըրեր է թէ ինչպէս կը կարդացուին Աւետարանը, սաղմոսները, երգեր է եւ շարականներ են., են.: Թղթակիցը կը գրէ թէ *Berliner Morgenpost*-ին մէջ՝ գերմանացի քննադատ մը հրճուանքով եւ գովեստի խօսքեր է այս դասախօսութեան եւ հայ ժողովրդական երգերուն վրայ, զորոնք ուրախ եւ գերմանական սրտին եւ զգացողութեան շար մօտիկ գտեր է»¹²: Ինչպէս տեսանք վարդապետը հայ ժողովրդական երաժշտութեան հետ համեմատելով ներկայացրել է արեւելեան տարբեր ժողովուրդների երգեր դրանց ընդհանրութիւններն ու տարբերութիւնները ցուցադրելու համար: Բայց սա դասախօսութիւն էր, ոչ թէ գիտական թէզի պաշտպանութիւն եւ խնդրոյ առարկան ամենեւին էլ քրդական երգերը չէին:



Ուրեմն ինչպէ՞ս, ինչո՞ւ եւ որտեղի՞ց յայտնուեց եւ արդէն մէկ դար շրջանառուում է «Քիւրտ երաժշտութիւնը», որ մէկ ներկայացում է որպէս դիպլոմային աշխատանք, մէկ էլ որպէս թէզ, քանի որ անհիմն է, գուցէ միամտաբար ասուած կամ պարտադրանքով գրուած, բայց, բոլոր դէպքերում, առանց հիմքի:

Վերադառնանք Ազատեանին: ԳԱԹում պահուող նրա արխիւը շատ հարուստ է: Ի թիւս այլ փաստաթղթերի այստեղ կարելի է գտնել գրեթէ ամբողջ այն նիւթը, որը Ազատեանը բարեխիղճ կերպով հաւաքել է Կոմիտասի մասին գիրք գրելու համար: Հաւաքուած են մեծ թուով մամուլի կտրտուկներ, արտագրուած յօդուածներ են.: Ահա այդ կտրտուկների մէջ պահուում է 1911ին *Քիւզանդիոն*ում լոյս տեսած մի յօդուած, որի վերնագիրն է «Հայ Երաժշտանոցին Առիթով», հեղինակն է Արշակունի Թէոդիկը:

Արշակունին իր ժամանակի ամենակրթուած եւ առաջադէմ կանանցից մէկն էր: Բարձրագոյն կրթութիւնը ստացել էր Լոնդոնում եւ Փարիզում, ամուսնու՝ Թէոդիկի հետ մասնակցել էր *Ամէնուն Տարեցոյցի*, *Քիւզանդիոնի* հիմնադրմանը, աշխուժ հասարակական գործիչ էր եւ թարգմանիչ: Յայտնի է, որ Կոմիտասը ցանկութիւն ունէր Կ. Պոլսում երաժշտանոց բանալ: Այս գաղափարն այնքան է որգետրել տեղի մտաւորականութեանը, որ ապագայ երաժշտանոցի համար նիւթական միջոցներ հայթայթելու եւ դրանք տնօրինելու նպատակով կազմուել է յանձնախումբ, առաջարկուել է նաեւ կազմել ուսումնական ծրագիր եւ դասաւանդուող առարկաների ցանկ: Էականն այն է, որ խօսքն *ազգային*


երաժշտանոցի մասին էր, որտեղ պետք է ուսուցման երոպական մեթոդն ու փորձը կիրառուէր *ազգային* երաժշտական կրթութիւն տալու համար: Բազմաթիւ յօդուածներ են տպագրուել այդ մասին մամուլի էջերին: Արշակունիին էլ իր յօդուածում Կոմիտասին ներկայացնելով գրում է. «... *աշակերտած է Ռիխարդ Շմիթի, յետոյ յաճախած Ֆրիդրիխ Վիլհելմ համալսարանը, ուր աւարտած է երաժշտական - փիլիսոփայական - պատմական գիտութիւնները, Պէլլէրման, Ֆլայշէր եւ Ֆրիդլէնպէր յայտնի Բրոֆէսէսօններն իրեն ուսուցիչ ունենալով: Աւարտականի իր թէզն եղած է Քուրդ երաժշտութեան վրայ ուսումնասիրութիւն մը որով հետաքրքրուած են շատեր՝ իբր եզական եւ ցայն վայր անծանօթ մնացած գործ*»¹³: Ահա, առաջին անգամ այստեղ է խօսուում «Քուրդ երաժշտութեան» մասին: Մէկ տարի առաջ՝ 1910ին, Թէոդիկներն *Ամէնուն Տարեցոյցը*ում տպագրել են Կոմիտասի ինքնակենսագրութիւնը¹⁴, որտեղ խօսք անգամ չկայ քրդական երաժշտութեան մասին: Ուրեմն ի՞նչը ստիպեց տիկին Թէոդիկին «Քուրդ երաժշտութիւն» թեմայով թէզ յօրինել ու կապել վարդապետի անուան հետ: Նիւթին վատ տիրապետելու հանգամանքը, թիրիմացութիւնը, թէ՛ վախը, յարմարողականութիւնը, կամ մէկ այլ պատճառ, օրինակ վարդապետին հարուածի տակ չղնելու հանգամանքը: Մամուլը, թէ՛ Պոլսում, թէ՛ Թիֆլիսում հետետում եւ արագ լուսաբանում էր Կոմիտասի բոլոր տեղաշարժերը, մեկնաբանում նրա համերգերը, գնահատական տալիս նրա գործունէութեանը: Յատկապէս աշխուժ էին Բիւզանդ Քէչեանի խմբագրած *Բիւզանդիոնը*, *Ամէնուն Տարեցոյցը*, *Ազատամարտը*: Յօդուածագիրների մի մասը ողջունում, խրախուսում էր ազգային երաժշտանոցի գաղափարը, միւսները զգուշանում եւ անվստահութիւն էին յայտնում Պոլսում որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն ունենալու նպատակայարմարութեան առնչութեամբ. «*Պոլսոյ մէջ հիմնուի, Օսմանեանն ու Հայկականն իրարու մրցակից չե՞ն համարուիր արդեօք, եւ հայկական հաստատութեան ընթացքն աւելի դժուար չ'ըլլա՞ր նոյն իսկ Հայ ուսանողներուն համար*»¹⁵ գրում էր *Բիւզանդիոնը*: Նոյնն էր եւ Կոմիտասի նկատմամբ: Ոմանք ջերմ խօսքերով մեկնաբանում էին նրա գործունէութիւնը, ներկայացնում նրան որպէս փրկիչ: Իսկ կրօնական ժողովը միջնադարեան հաւատաքննիչների մոլեռանդութեամբ իսկական հալածանք էր սկսել նրա նկատմամբ:

Ազատեանի հաւաքած մամուլի կտրտուկների մէջ կայ շատ հետաքրքիր մի յօդուած, որի վերնագիրն է՝ «Բաց Նամակ Առ Տ. Կոմիտաս Վարդ.», հեղինակն է Սերովբէ քահանայ Պուրմայեանը: Նիւթը տպագրուած է 1911 Նոյեմբերին (ցաօք հնարաւոր չեղաւ պարզել, թէ որ թերթում է հարպարակուել): Նամակագիրն աջակցութիւն է յայտնում Կոմիտասին եւ յորդորում չվհատուել. «*մի ցաւիք սակայն թէ կ'հալածեն Ձեզ*», եւ դառնութեամբ նշում. «*երբեք անսովոր բան մը չէ մեզի համար, Տ. Հայր, որ մեզմէ մէկը մեզ կառավարող իշխանութեան դիմելով Ձեր*

համերգն իբր «խոռվարարական» ներկայացում մատնե անոր»¹⁶: Այսինքն ատելությանն այնքան մեծ էր վարդապետի հանդեպ, որ պատրաստ էին նրան յանձնել թուրք իշխանություններին որպես ըմբոստության, ազգայնամոլության կոչ հնչեցնող մի խոռվարարի: Նրա հոչակը հանգիստ չէր տալիս կրօնական ժողովի անդամներին, քանի որ ստույգ էր իրենց միապաղաղ, ծանծրալի գործունեությունը: Նրանց վախեցրել էր Կոմիտասի բերած թարմությունը եւ ազգային ելեւջի յաղթական տարածումը պոլսահայության մէջ: Չէ որ իր ինքնությունը ճանաչող ու գիտակցող ժողովուրդն անպարտ է եւ վաղ թէ ուշ ընդդիմանալու էր Պոլսի կղերականությանը բնորոշ ստրկամտությանը: Կարո՞ղ էր «Քիւրտ երաժշտությունը» յօրինուել ի պաշտպանութիւն Կոմիտասի, որպեսզի ետ մղուեր կամ ի չիք դարձուեր իշխանություններից սպառնող հաւանական հարուածը: Թերեւս կարող էր: Արշակունիի Թէոդիկը Ազգանուէր Հայուիյաց Ընկերության անդամ էր, որի նպատակը հայոց մեջ օրիորդաց վարժարաններ բանալն ու գրագիտութիւն տարածելն էր, իսկ 1909ին՝ Ատանայի ջարդերից տուժածներին օգնութիւն հասցնելը: 1910ին «Ամիս Մը Ատանա» վերնագրով, Արշակունիին հրապարակեց ականատեսի իր վկայությունները: *Արդի Բարոյագիտութիւն* դասագրքի հեղինակն այնքան միամիտ չէր, որ թիւրմբոնման հետեւանքով շփոթութիւն ստեղծէր: Ուրեմն ինչու՞ յաջորդ յօդուածագիրներն ու կենսագիրները չստուգեցին այդ տեղեկությունը այլ կուրօրէն պատճենեցին Արշակունիի Թէոդիկի գրածը, երբ Կոմիտասն ինքն իր ինքնակենսագրություններից որեւէ մէկի մէջ չի գրել «Քիւրտ երաժշտության» մասին: Արդե՞օ՞ք միայն ժամանակի պահանջն էր պատճառը, թէ՞ պարզ սովորությունը:

Վարդապետն ունի ինքնակենսագրության երեք տարբերակ (Կոմիտաս, *Ուսումնասիրություններ եւ Յօդուածներ, Գիրք Բ.*), որոնք գրել է 1908ին եւ որտեղ՝ վերջում, ներկայացնում է իր տպագրուած եւ անտիպ աշխատանքների ցանկը: Նա իր տպագրուած երգարանների ցուցակում նշել է 1903ին Մոսկուայում Եւրգեստն հրատարակչության տպագրած *Melodies Kurdesի* մասին: Սա փոքրիկ երգարան է կազմուած 13 քրդական ժողովրդական երգերից: Գծային նոտագրութեամբ ներկայացուած են երգերի մեղեդիներն ու դրանց հայատառ եւ լատինատառ քրդերէն խօսքերը: Ե՞րբ է Կոմիտասը գրի առել դրանք՝ յայտնի չէ: Նրա արխիւում այդ մասին վկայող փաստաթուղթ չկայ: Յայտնի է, որ այս փոքրիկ ժողովածուն, կազմուել է «Էմինեան Ազգագրական ժողովածուի» Ե. Հատորի համար որպէս յաւելում: Խմբագիրը՝ Գրիգոր Խալաթեանցն այդ մասին գրում է. «*Էմինեան ազգագրական ժողովածուի խմբագրությունը՝ քրդական երգերի եղանակների մասին որոշ մի գաղափար տալու դիւրմամբ յանձնեց ժողովրդական երգի մասնագէտ արժ. Հայր Կոմիտաս վարդապետին ծայնագրելու այդ եղանակները եւրոպական խազերով*»¹⁷: Մէկ այլ անդրադարձ՝ քրդական


բանահիւութեան կարելի է գտնել վարդապետի 1905ին Թիֆլիսի Յովնանեան Դպրոցի դահլիճում կարդացած դասախօսութեան մէջ, որի թեման էր «Հայ Ժողովրդական Եւ Եկեղեցական Երգերը»: Դասախօսութեան սղագրութիւնն առաջին անգամ տպագրուել է Մշակ թերթում նոյն թուականին: Խօսելով երաժշտութեան եւ բնութեան կապի մասին վարդապետն ասում է. «...երաժշտութեան եղանակը, ոգին կախումն ունի բնութիւնից: Իսկ ինչ վերաբերում է նրա բովանդակութեան, դա կախուած է ժողովրդի կեանքի պայմաններից: Քրդերը իբր լեռնական ունեն մի երաժշտութիւն, որ զօրապէս կրում է բնութեան կնիքը, իսկ իբրեւ թափառաշրջիկ եւ խաշնարած՝ նա, այդ երաժշտութիւնը՝ անկայուն է եւ պարտում է ոչխարների եւ այծերի շուրջը»¹⁸: Կա՛յ Կոմիտասի արխիւում այլ վկայութիւն այն մասին, որ վարդապետը զբաղուել է քրդական բանահիւութեան ուսումնասիրութեամբ՝ այո՛, կայ: Նրա արխիւում կարելի է գտնել առանձին թերթերի վրայ իր ձեռքով, մատիտով, հայկական



նոտագրութեամբ գրուած միքանի երգ¹⁹: Էջերի վրայ Կոմիտասը նշել է՝ «քրդերէն»:

Քրդերէն դեռ չի նշանակում քրդական մշակոյթ: 1892ին Կոմիտասն այցելեց իր ծննդավայր Քէօթահիա, որտեղ իր հարազատների եւ բարեկամների երգածից գրի առաւ թրքերէն բազմաթիւ երգեր:

Դրանք ամփոփեց մի տետրի մէջ եւ վերնագրեց՝ «Արեւելեան թրքական եղանակներ, հաւաքեց Սողոմոն Ա Սարկաուագ Սողոմոնեանց Միաբան մայր արօռ Ս. Էջմիածնի, 1892, 15/ժա»: Ինչպէս յայտնի է հայերէնը Քէօթահիայում արգելուած էր: Քաղաքի բնակիչները թրքախօս էին:



Հայերէնը զուտ եկեղեցական լեզու էր եւ առօրեայ կիրառութիւն չունէր: Քէօթահիացիք ստեղծագործում էին թուրքերէն: Կոմիտասի թրքական երգերի տետրի բոլոր էջերի

լուսանցքներում գրուած է տուեալ երգը կատարողի անունը եւ ազգանունը:

Օրինակ՝ առաջին էջի լուսանցքում կարդում ենք. «Երգեց Խաչիկ Էֆենդի Պալանսեան» կամ 15րդ էջին՝ «Երգեցին տիկնայք Կիլինէ եւ Զմրուխտ Սողոմոնեանները»²⁰: Բոլոր երգիչները բացառապէս հայեր են: «Քրդերէն» նշումը կրող թերթերից մէկի լուսանցքում եւս գրում է երգը կատարողի անունը՝ «Պետրոս Աստուածատուրեան»: Մէկ այլ էջի վրայ՝ «Քրտական հնգեակի շղթան» եւ հայկական նոտագրութեամբ շարադրուած է քրդական եղանակի ծայնաշարը:

Յաջորդ էջի գրումները մէկ գծով վերից վար ջնջել է եւ վրան թանաքով գրել. «անպէտք»²¹: Ահա նրա արխիւում եղած քրդական երաժշտութեանը վերաբերող նիւթը, որը շատ հեռու է գիտական թէզ կոչուելուց:

Որպէս լայնախոհ արուեստագէտ Կոմիտասը գրի է առել եւ ուսումնասիրել թուրքական, ֆիննական, քրդական եւ այլ ժողովուրդների երգեր: Որպէս անհատ նա կարող էր շփուել ցանկացած անձի հետ, որպէս երաժիշտ-ազգագրագէտ պարտաւոր էր գիտենալ միեւնոյն տարածաշրջանում բնակուող ու ստեղծագործող ժողովուրդների երաժշտութիւնը:

ԳԱԹի տնօրէն Կարօ Վարդանեանի գլխաւորութեամբ, նամակով դիմուեց Բեռլինի Հումբոլդտի Համալսարանի արխիւին՝ Կոմիտասի «Քուրդ երաժշտութիւն» թէզը որոնելու խնդրով եւ հարիւրամեայ շփոթին վերջակէտ դնելու նպատակով: Միաժամանակ լիազօրեց Հումբոլդտի Համալսարանի Փիլիսոփայութեան Բաժնի մագիստրականում սովորող Անի Մկրտչեանին հետամուտ լինել հարցի լուծմանը: Պատասխանը ստացանք 2016ի Յունուարի չորսին: Համալսարանի արխիւի ղեկավար Ալեքսանդրա Պալիչէկը Մկրտչեանի միջոցով սիրայօժար տեղեկացնում է. «*In unseren Akten findest sich Kein Hinweis auf ein Promotionsverfahren. Auch im Verzeichnis der Hochschulschriften, in dem die an deutschen Universitäten erfigreich absolvierten Promotionsverfahren aufgeführt sind, habe ich ihn nicht finde Können*»: Այսինքն՝ Գերմանիայի գիտական աշխատանքների կենտրոնական գրանցամատեանում Կոմիտասը կամ իր թէզի թեման գրանցուած չեն, ինչը նշանակում է, որ նա **գիտական թէզ չի գրել եւ չի պաշտպանել**:

Յաւօք Կոմիտասը մեր հասարակութեան ընկալմամբ ընդամենը ցեղասպանութեան զոհի խորհրդանիշ է, բայց ոչ ուսուցիչ: Այնինչ նրա երաժշտութեան տարրական տեսութեան դասագիրքը (որքան էլ թերի ու անաւարտ) կարող էր հայ ազգային երաժշտական կրթական համակարգի հիմք լինել՝ չարուեց: Նրա երաժշտագիտական ամեն մի աշխատութիւն, յօդուած կամ նամակ վաղուց պէտք է ընկալուեր որպէս ուսուցչի խօսք ու խորհուրդ՝ չարուեց: Այլ միայն տառապեալ կուռք կերտուեց վարդապետի կերպարից: Մինչդեռ Կոմիտասի գործն իր ինքնութեան գիտակցումով ամուր կանգնած հայի տեսակը կրթելն էր, որին նուիրեց իր ողջ կեանքը:

- ¹ Թ. Ազատեան, *Կոմիտաս Վարդապետ. Իր Կեանքն Ու Գործունէութիւնը*, Հ. 1, Կ. Պոլիս 1931, էջ 24:
- ² Ս. Գասպարեան, *Կոմիտաս*, Երեւան, 1961, էջ՝ 66. Նան՝ Ալ. Шавердян, *Комитас и Армянская музыкальная Культура* (Կոմիտասը եւ հայ երաժշտական մշակոյթը), Երեւան, Հայպետհրատ, 1956, էջ 59:
- ³ *Ակնարկ Հայ Երաժշտութեան Պատմութեան*, Երեւան 1963, էջ 165:
- ⁴ Մ. Մուրադեան, *Ուսուր Բէկ. Ուրուագիծ Եզդի Ժողովրդի, Ազգապետների Մի Տոհմի, Հայ-Եզդիական Կապերի Պատմութիւն*, Երեւան 2012:
- ⁵ Մուրադեան, էջ 96:
- ⁶ Մուրադեան, էջ 97:
- ⁷ ԳԱԹ, Կ. Ֆ. 318:
- ⁸ ԳԱԹ, Կ.Ֆ. 332:
- ⁹ ԳԱԹ, Կ.Ֆ. 462:
- ¹⁰ *Պատմաբանասիրական Հանդէս*, Երեւան, 1988, էջ 48:
- ¹¹ Կոմիտաս Վարդապետ, *Նամականի*, էջ 59: Կոմիտասի բեռլինեան դասախօսութիւնից տպաւորուած Միջազգային Երաժշտական Ընկերութեան Բեռլինի մասնաճիւղի քարտուղար, երաժշտագէտ Մաքս Զայէֆերտը գրել է. «Այն խորունկ հայեացքը, որով դուք, ի մօտոյ մեզ ներկայացրիք մեզնից բոլորովին հեռու գտնուող բարձր եւ զարգացած մի քաղաքակրթութեան վեցնից կարողութիւնը, - անակնկալօրէն հմտալից մատուցումն այն ամէնի, որ արեւմտեան հնագոյն քաղաքակրթութեան ճանաչման համար իսկապէս բացառիկ նշանակութիւն ունեն, Ձեր դասախօսելու եւ երգելու կատարեալ արուեստը – սրանք բաներ են, որ մեզ զարմանք կարող էին պատճառել եւ որոնք վառ կը մնան ձեր ունկնդիրների յիշողութեան մէջ» (Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրութիւններ եւ Յօդուածներ*, Գիրք Բ, Երեւան 2005, էջ 83-91):
- ¹² *Հանդէս Ամսօրեայ*, Վիեննա 1899, թիւ 8, էջ 253:
- ¹³ *Բիւզանդիոն*, 1911, Մարտ 15-28, էջ 1:
- ¹⁴ *Ամէնուն Տարեցոյցը*, Կ. Պոլիս 1910, էջ 214:
- ¹⁵ Կոմիտաս Վարդապետ, *Նամականի*, էջ 242
- ¹⁶ *Բիւզանդիոն*, 1911, Յունուար 19-1 Փետրուար, էջ 1:
- ¹⁷ ԳԱԹ, Կ.Ֆ. անմշակ:
- ¹⁸ *Պատմաբանասիրական Հանդէս*, Երեւան 1965, թիւ 4, էջ՝ 188:
- ¹⁹ *Մշակ*, Թիֆլիս 1905, թիւ 65 էջ՝ 1 եւ թիւ 66, էջ՝ 2:
- ²⁰ ԳԱԹ, Կ. Ֆ. 349:
- ²¹ ԳԱԹ, Կ. Ֆ. 352:

A HUNDRED-YEAR-OLD CONFUSION:
KOMITAS AND HIS DISSERTATION ON KURDISH MUSIC
(Summary)

MARINA MOUSHEGIAN
marinamoushegian@gmail.com

The art of Komitas plays a central role in the history of Armenian music. His biography and his musical and musicological works have been relatively well studied. There are, however, certain issues which are understudied and have been circulating for decades now in the media and in certain professional circles. One of these issues is the baseless claim that Komitas wrote a graduation thesis, a claim which misrepresents some details of his biography and research work.

The author tackled this issue through a deep and thorough investigation in the archives of the University of Berlin, where Komitas studied musicology. The extensive research in the archives and registers of the University of Berlin produced no evidence whatsoever of such a document and thus brought the author to the conclusion that Komitas had not written any dissertation in the University of Berlin and accordingly had not defended any thesis on Kurdish music.